

«Միս եւ գինի կրօնաւորաց ոչ է ուտելի» (Սուփ. ԺԱ, 55): Այս սահմանն, այդպէս ընդհանուր այդ ժամանակները, տակաւին կը յարգուէր ժԲ դարուն Հայոց մէջ, ուր Շնորհալին գրելով վանականաց, կը գովէր զանոնք՝ թէ «բազումք ի ձէնջ եւ ոչ հացիւ եւ ջրով յագին վասն սիրոյն Աստուծոյ, թող թէ աւելորդ կերակրովք եւ գինեաւ» (Ընդհ. 20): Ասոր կը խրատէր եւ Միս. Գոշ՝ ըսելով. «Միս մի՛ ուտիցես՝» բաց ի հիւանդութեան կամ ծերութեան պարագայէն¹. Իսկ «գինի մի՛ բնաւին» (Խր. ոգ.), զի երկրորդիս վտանգները ծանրագոյն կը համարուէին, ինչպէս էին իսկ (ՅճԻ. 85), մինչ թաթուլ երկուքն ալ կը ներէ «որոյ պէտք են» (55): Սարգիս վրդ. նոյնպէս կը թելադրէր իւր վիճակակցաց՝ թէ «ի չափաւորացն եւս (գինւոյ) պարտ եւ արժան էր մեզ հրաժարել» (792). ու Տաթեւացին կը յիշեցնէր հին օրէնքը՝ թէ «գինին ի կարգաւորաց ամենեւին արգելեալ է» (Քրգ. ամբ. 267):

Տ. — Զեղմունք: — Ա. Բայց ի՞նչ կը ցուցնեն այդ պատուէրք, յորդորք եւ ըղձականք՝ «արժան էր մեզ հրաժարել». եթէ

1. Եզրպտացիք ալ միս եւ գինի կը ներէին հիւանդաց (Եւադ. 140, 357):